



ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ Ի. ԴԱՐԱՍԿԶԻ
ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Երեւանի պետական համալսարանի աստուածաբանութեան ֆակուլտետը հեղինակային հրատարակութեամբ լոյս է ընծայել Վահագն Յարութիւնեանի «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութիւնը 1902—1921 թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում» մենագրութիւնը¹: Գիրքը հրատարակութեան է երաշխաւորել նոյն ֆակուլտետի գիտական խորհուրդը: Պատասխանատու խմբագիրն է պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Արամ Յովհաննիսեանը, իսկ լեզուաֆիլոսոֆիկական խմբագրութիւնն իրականացրել է Յասմիկ Մադոյեանը: Իբրեւ գրախօս են հանդէս եկել պ. գ. դ., պրոֆեսոր Արման Նղիազարեանն ու պ. գ. թ., դոցենտ Էդգար Յովհաննիսեանը:

Գիրքը բացւում է Ներածութեամբ, որին յաջորդում է առաջին գլուխը՝ «Պաշար Կիլիկիոյ կաթողիկոսական գահի համար: Սահակ Բ. (Նշէգցի) Խապայեան կաթողիկոսի աթոռակալման առաջին շրջանը (1902—1914 թթ.)» վերտառութեամբ: Այս բաժնի ենթագլուխներն են՝ «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութիւնը եւ իր թեմերը XX դարասկզբին», «Պաշար Սսի կաթողիկոսական աթոռի համար (1894—1902 թթ.)», «Սահակ Բ. Խապայեանի՝ որպէս Սսի Հայոց նոր կաթողիկոսի ընտրութիւնը եւ օծումը», «Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսի գահակալման սկզբնական շրջանը (1902—1909 թթ.)», «Մահմեդական անհանդուրժողականութեան եւ բռնութիւնների դրսեւորումները 1909 թ. կոտորածների շրջանում՝ Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութեան գործունէութեան համատեքստում» եւ վերջապէս՝ «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութեան հոգեւոր-եկեղեցական կեանքը 1909—1914 թթ.»։ Գրքի այս մասում հարկի բժախնդրութեամբ հեղինակը ներկայացրել է պատմական շրջափուլն ու տեղ գտած զարգացումներն ու իրադարձութիւնները՝ հող նա-

¹ Երեւան, 2023, 365 էջ+16 էջ ներդիր:

խապատրաստելով իր հետագայ շարադրանքի եւ քննարկելիք խնդիրների դիւրնկալութեան համար: Գիտենք, որ Հայոց կաթողիկոսական աթոռներին վերաբերող ցանկացած անդրադարձ առաջին իսկ պահին հարց է առաջացնում ընթերցողի մտքում. ո՞ր կողմի տեսակէտներն է առաջնային համարել հեղինակը կամ ո՞ր կողմի դիրքերից է մեկնաբանել իրադարձութիւնները: Գրքի հէնց սկզբում Յարութիւնեանը ձեւակերպում է իր ընկալումը՝ պարզորոշ ի ցոյց դնելով, որ իր հետագոտութիւնները զուտ գիտական են՝ որեւէ նախապատուութիւն կամ կողմնակալութիւն չկայ եւ չի կարող լինել՝ գլխաւորն ու իշխողը գիտական սկզբունքայնութիւնն է, ճշգրտութիւնը: Ահա նա արձանագրում է. «Էջմիածնի տեսակէտն այն էր, որ Կիրակոս Վիրապեցին իր ընտրութեամբ եւ օծումով աթոռն իր նախնական վայրում՝ Էջմիածնում էր հաստատել, որով Սսի կաթողիկոսութեան հետագայ գոյութիւնը դառնում էր ապօրինի: Իսկ Կիլիկիոյ կաթողիկոսները պնդում էին, որ Ամենայն Հայոց հայրապետների ուղիղ գծով յաջորդներն իրենք էին: Այս վէճերին վերջ դնելու եւ երկու աթոռների միջեւ կարգ ու կանոն հաստատելու համար Էջմիածնի Փիլիպպոս եւ Կիլիկիոյ Ներսէս կաթողիկոսները 1652 թ. Երուսաղէմում ժողով գումարեցին, որտեղ ընդունուեցին իրենց իրաւասութեան կանոնները, որոնք մինչեւ օրս ընկած են նրանց յարաբերութիւնների հիմքում»²: Միւս՝ 2-րդ գլուխը, որ հեղինակը վերնագրել է «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութիւնը Մեծ եղեռնի տարիներին եւ կաթողիկոսական աթոռի տեղափոխութիւնը Երուսաղէմ», ներառել է բերող բաժինները՝ «Կիլիկիայի հայ բնակչութեան բռնաճնշումները եւ տարագրութիւնը 1914—1915 թթ.՝ Սսի Հայոց կաթողիկոսութեան գործունէութեան լոյսի ներքոյ», «Օսմանեան կառավարութեան 1916 թ. յուլիսի 19-ի «Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան» օրինագիծը», «Կիլիկիոյ «Կաթողիկոս-պատրիարք» Սահակ Բ. Խապայեանի պաշտօնավարման երուսաղէմեան շրջանը»: Վերջինը 3-րդ գլուխն է, որ անուանուած է «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսական աթոռի դեգերումները 1917—1921 թթ.: Սրա ենթաբաժիններն են՝ «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխութիւնը Երուսաղէմից Դամասկոս եւ Հալեպ (1917 թ. նոյեմբերի 6—1919 թ. գարուն)», «Հայ ազգաբնակչութեան վերադարձի կազմակերպումը Կիլիկիա եւ

² Տէս էջ 30:

Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութիւնը», «Ազգային վերաշինութեան գործընթացը Կիլիկիայում եւ Հայ Եկեղեցու դերակատարումը», «Իրադրութիւնը Կիլիկիայում 1919 թ. վերջերին եւ 1920 թ. սկզբներին: Սահակ Բ. Խապայեանի ուղեւորութիւնը Ֆրանսիա, Իտալիա եւ Մեծ Բրիտանիա»: Հատորի հետազօտական մասն աւարտում է Եզրակացութիւն բաժինը, որին հետեւում են Օգտագործուած աղբիւրների եւ գրականութեան ցանկն ու Յաւելուածները, ռուսերէն եւ անգլերէն ամփոփումները: Նախ նկատենք, որ գրականութեան ցանկը ծաւալով իսկ պատկառելի է՝ մանր տառատեսակով 32 էջ: Պէտք է նաեւ առանձնակի ընդգծենք, որ աշխարհասփիւռ պարբերականներից, ականատեսների յուշերից եւ օրագրութիւններից քաղուած հարուստ նիւթից բացի ուսումնասիրութեան հեղինակը մեծապէս կիրառել է նաեւ դիւանների եւ պահոցների (archive) վաւերագրերը՝ ինչպէս, ասենք, Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանինը, Կահիրէի առաջնորդարանինը, Ռուսական կայսրութեան արտաքին քաղաքականութեան, Փարիզի Նուբարեան գրադարանի եւ այլ շտեմարանները: Դրանցից քաղուած բազմաթիւ փաստաթղթեր շրջանառութեան մէջ են դրւում առաջին անգամ, ինչն անշուշտ յոյժ արժեւորելի է: Այս կարգի, ինչպէս եւ գրքի Յաւելուածում առկայ ազգանպաստ տեղեկութիւնները, իբրեւ քարոզչական եւ գաղափարախօսական կարեւոր փաստարկներ, թերեւս պէտք է ըստ կարելոյն շատ տարածել՝ հնարաւորութեան դէպքում հասանելի դարձնելով նաեւ օտարների համար: Այս տեսանկիւնից վստահաբար կարող ենք ասել, որ դիտարկուող գիրքը եւս ցանկալի է թարգմանել՝ գոնէ առաւել տարածուն օտար լեզուներից որեւէ մէկով: Աւելորդ անգամ փորձելով շեշտել հաղորդուող տեղեկութիւնների կարեւորութիւնը՝ յաւելուած աղիւսակներից իբրեւ օրինակ բերենք մի քանի վերնագիր՝ «Կիլիկիոյ Հայոց կաթողիկոսութեան եկեղեցական կալուածքները», «Սսի սրբավայրերը XIX դ. վերջին եւ XX դ. սկզբին», «Վիճակացոյց Կիլիկիայի ազգապատկան կալուածքները» եւ այլն: Թէեւ այսօրուայ ցնորեալ իրականութեան մէջ իրաւունքն ու արդարութիւնը ամենեւին արհամարհուած են, սակայն մշտապէս պէտք է պատրաստ լինել օրէնքի գերակայութեանն ապագայում, երբ ազգապատկան եւ եկեղեցական կալուածները անխուսափելիօրէն պէտք է վերադարձուեն տէրերին: Հետեւաբար այս ամենին աղերսուող նիւթերն ու վաւերագրերը պէտք է ունենանք բազմիցս եւ մանրակրկիտ

ստուգուած եւ ուսումնասիրուած վիճակում. գործ, որի նուիրեալներից է նաեւ խնդրոյ առարկայ ուսումնասիրութեան հեղինակը՝ մտաւորական ընտանիքում լոյս աշխարհ եկած Վահագն Յարութիւնեանը՝ վաստակաշատ պրոֆեսոր Հմայեակ (Համօ) Յարութիւնեանի եւ նրա անուանի որդուն՝ պրոֆեսոր Աւետիս Յարութիւնեանի արժանաւոր ժառանգը, որի երախայրիքին բարի ընթացք եւ չարչարանքը գնահատող ընթերցող ենք մաղթում:

ԱՐՄԷՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

